

Հասարակությունը և անհատները բազմաթիվ հարցեր են բարձրացնում կապված այն բանի հետ, թե արդյոք թույլատրվում է անցկացնել որոշակի բացօթյա միջոցառումներ, երբ Շրջանը զարգացնում է վերականգնողական փուլ: Այս հաճախ տրվող հարցերի շարքը մշակվել է, որպեսզի օգնի պատասխանել բացօթյա ժամանցային միջոցառումների վերաբերյալ բարձրացված մի քանի հարցերի: Այս փաստաթուղթը կթարմացվի Շրջանի վերականգնմանը զուգահեռ, և այն թույլատրվում է տարածել բոլոր միջոցառումների վրա, որոնք ներկայումս թույլատրվում են:

**1. Կարո՞ղ եմ արդյոք հաճախել բացօթյա մարզումների կամ մարտարվեստի դասերի համայնքային կենտրոնում կամ լողափում:**

Բացօթյա տարածքում անցկացվող մարզումները կամ մարտարվեստի դասերը, ինչպիսիք են զումբան, տեկվանդոն կամ յոգան, թույլատրվում են, քանի դեռ պահպանվում է համապատասխան ֆիզիկական հեռավորություն, և դասընթացը համապատասխանում է [Մարզասրահի և Մարզումների Կենտրոնի](#) արձանագրության մեջ ուրվագծված պահանջներին: Միջոցառումների անցկացման ժամանակ մասնակիցները պետք է հնարավորինս կրեն իրենց դեմքի ծածկոցները: Մարտարվեստի դասերը պետք է սահմանափակվեն անհպում վարժությունների ուսուցմամբ: Մրցումներն արգելվում են:

**2. Արդյո՞ք թույլատրվում են երկթամբ սավառնակով թռիչքը (tandem hang-gliding), օդապարիկով ճախրելը (sky diving) կամ մալուխով ցատկը (bungee jumping):**

Այժմ թույլատրվում է միայն մեկ հոգու մասնակցությամբ միջոցառումների անցկացումը: Հրահանգիչները կարող են տրամադրել տեղեկություններ և ուղղորդել, սակայն չեն կարող մասնակցել բուն միջոցառմանը հաճախորդի հետ միասին: Հրահանգիչներն ու հաճախորդները պետք է հնարավորինս կրեն դեմքի ծածկոցներ և պահպանեն ֆիզիկական հեռավորություն, մինչև ուսումնասիրում են անվտանգության վերաբերյալ տեղեկությունները կամ ընդհանուր հրահանգները: Աշխատակազմն ըստ անհրաժեշտության կարող է մոտենալ հաճախորդին՝ համոզվելու, որ վերջինս համապատասխան կերպով զրահավորված է, և այլ անհրաժեշտ անվտանգության ստուգումներ կատարելու համար: Բուն միջոցառման ժամանակ դեմքի ծածկոցներ կրելը պարտադիր չէ:

**3. Կարո՞ղ եմ արդյոք մասնակցել ներկերով հրաձգության (paintball) միջոցառումներին:**

Այս միջոցառումը ներկայումս արգելված է: Ներկերով հրաձգությունը այնպիսի միջոցառում է, որը կարող է նպաստել մասնակիցների սերտ շփումը և թիմային փոխհարաբերությունները խաղի ընթացքում: Մտահոգություն կա, որ սոցիալական հեռավորության պահպանումը և վարակի վերահսկողությունը հնարավոր չէ իրականացնել անհրաժեշտ մակարդակով՝ այս տարածքներում COVID-19-ի տարածումը նվազեցնելու համար:

**4. Թույլատրվում է արդյոք ջրասուզումը (snorkeling), ստորջրյա լողն ակվալանգով (scuba diving) և ազատ սուզումը (free diving) հասարակական լողափերում:**

Այո, այս միջոցառումները թույլատրվում են: Համոզվեք, որ համապատասխանում եք [լողափերի](#) վերաբերյալ հրապարակված ուղեցույցին: Ե՛վ ջրում, և՛ ցամաքում դուք պետք է պահպանեք առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ձեր ընտանիքի անդամ չհանդիսացող անհատներից:

**5. Արդյո՞ք ներկայումս սահադաշտերը կարող են գործել:**

Այո, դրանք կարող են գործել: Այս հաստատությունները վերահսկող կազմակերպությունը կարող է որոշել փակ պահել դրանք, եթե կարծում է, որ չունի համապատասխան անձնակազմ կամ ռեսուրսներ (օր.՝ ուղղորդող նշաններ) վարակի վերահսկման գործընթացը պահպանելու կամ ֆիզիկական հեռավորությունը ապահովելու համար:

**6. Թույլատրվում են արդյոք այնպիսի բացատային խաղեր, ինչպիսիք են մարգագետնի գնդախաղը (Bocce ball) և բացատային գնդախաղը (lawn bowling):**

Այո, այս միջոցառումները թույլատրվում են, քանի դեռ մասնակիցներն ամբողջ ընթացքում պահպանում են 6 ոտնաչափ հեռավորություն իրենց ընտանիքի անդամ չհանդիսացող անձանցից և կրում են դեմքի ծածկոցներ: Խաղացողները պետք է խուսափեն խաղային սարքավորումների փոխանակումից կամ պետք է ախտահանեն դրանք նախքան մեկ այլ խաղացողի օգտագործումը: Չի թույլատրվում մրցումների անցկացումը, ինչպես նաև միաժամանակ 4 հոգուց ավել խաղացողների ներկայությունը խաղահրապարակում կամ «կանաչի» վրա:

**7. Կարո՞ղ եմ արդյոք նավակ վարձել կամ 1:1 նավարկության դասեր վերցնել:**

Նավակը կարելի է վարձել [փոքր ջրային նավի վարձակալման](#) ուղեցույցում նշված հանրային առողջապահության ցուցումներին համապատասխան պայմաններով: Նավարկության դասերը կարող են անցկացվել, քանի դեռ և՛ ուսանողը, և՛ հրահանգիչը կրում են դեմքի ծածկոցներ և պահպանում են 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, ինչպես նաև համապատասխանում են վերը նշված ջրային նավերի վարձակալման ուղեցույցի փաստաթղթում առկա այլ սահմանափակումներին:

**7. Ու՞մ կարող եմ դիմել լրացուցիչ տեղեկությունների համար:**

Ցանկացած հարցի դեպքում զանգահարեք 211: